

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

7 ՄԱՅԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այնպիսի լուրերն չեն
(ԽՄԲԱԳՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ)

Ընկերային հարցեր:—Հանրագույն հրապարակումը ազգ. քերթերուն
ՅՈՎՀ. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ

Գարունն է եկեր (Բանաստեղծություն) ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ:—Գրող բլլալ. ԵՆՈՎՔԱՐՄԷՆ:—Օտար հշեր. Անգլիական գրականություն. ՇԱԽԱՍՊ ԾԻԱԾԱՆ. Ֆրանսական գրականություն. Տ. Կ. Զ.—Ցայգն է պայծառ (Բանաստեղծություն) Մ. Կ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ:—Տպաւորութիւններ. Ֆ:—Զանազանք:—Խմբագրական Նօթեր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Գրանք կամ 5 բուլայի: Թղթատարական ծախսը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ անգամ:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիրամասչելի պայմաններով:

Զեմ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى


ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԶԿԱՆ ԻԻՂԻ ՊԷՏԲ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ ՄԸ



ԳԵՂԱՐԱՆ

ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆ

Կ. Պօլիս, Մանմուտ Փաշա Պաշի, Ապուտ ԷՖ.ի խանին դէմ 261

Դեղարանն նկատելով որ՝ Պօլսոյ կարեւոր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելուն առթիւն Մօրինայի ձկան իւղի մասին եղած խնդրանքները հեռզհեռէ շաքտած են, ոսյն խնդրանքին եւ ի մասնաւորի Ազնիւ յաճախորդաց գահացում մը տալու եւ փոքր ինչ ծառայութիւն մը մատուցանելու համար, ուրոխ եւ այս առիթով յայտարարելու թէ՛ մասնաւոր յանձնարարութեան մը համաձայն բերել տալով ըլլալով Բէթէր-ՄՕԼԼԷՐԻ Մօրինայի ձկան իւղին առջին տեսակը, ԱՌԱՆՑ ՀՈՏԻ, կը ծախուի Դեղարանն՝ թէ մասնաւոր չիշերաւ մէջ եւ թէ քաջով, ամէնէն փափկակազմ ստամոքսի համար իսկ խիւստ ախորժելի ըլլալով, թէ մեծերու եւ թէ՛ տկարակազմ պզտիկ տղայոց, Ուստի ամէն առիթ՝ որոնք կը փոփոքու խմել թէ աժան եւ թէ առանց հոգի զօւտ եւ անխաղախ ձկան իւղ, թող հաճին դիմել դեղարանն, գէթ մէկ առիթով փորձով մը ստուգելու մեր խօսքերուն ճշտութիւնը։

Սոյն բաղամասայ դեղարանը, այս առիթով նոր կազմակերպութենէ մը ետքը, խաչիկ ֆէսճեանի կողմանէ, քիչ ատենուան մէջ պատիւը ունեցաւ գնահատուիլ արդոյ հաստակութեանէն, որմէ քաջալերուելով պէտքը կը զգայ իրեն ուղղութիւնը եւ նպատակը ներկայացնել հոգորութեան։

ՆՊԱՏԱԿ.—Դո՛ւ ձգել իր յաճախորդները միշտ՝ դեղերու թարմութեամբ, եւ արուեստին խղճամբ գործադրութեամբ։

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.—Մաքրութիւն, ապանեխման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղարանին սկզբունք եղած են։

Եւրոպական տան մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբթու պատուաստի թարմ քիւսպեր (աօր գալիմի) կը հասնին բօսդայով։

Ամէն օր Դեղարան յաճախող Հայ եւ օտարադէի բժիշկներէն յիշենք մասնաւորաբար հանրածառնօթ ԲԺԻՇԿ ԱԼԼԱՀԷՐՏԻ ԷՖ.՝ որ ամէն Գ. Ե. Շ. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծառայութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանատարնը, Դեղարանը ունի նաեւ ԴԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ, 8—10

CAISSE PATERNELLE

ՔԵՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապաւովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապաւովագրութիւնք 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՐ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ

62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատաւ
թիւնն է 740/0. որով ՔԵՍ ԲԱԴԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը զեր ի վեր կը
հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութեանէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծրանաւորի ամէնէն նշանաւոր
դասաւորներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծրանաւորի երկաթուղեաց ընկերութեան և Քրէտի
Լիօնէի վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ, Դասնաւոր-անդիք ընկերութեան վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱՄԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համամ, Բասամ Քաթրոնօղլու

Ընկերութեան վաղ անցեալներէն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.— Շահաւոր դիմել պիտի տուի այն ֆենիչից որ կարելու արդիւնք մօ ի 2
աւտօմատ ուլլալ անձնագրէն: 1—10

ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ քօնաֆիլէ ապրանքաց

Մեծ—Շուկայ, Քիւրքէնիւրու դրան կէց, Թ. 41—43

Նայնպէս, արանց և կանանց հաշակաւոր
հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլ-
թան—Համամ, Միտիլլի Դրամատան դէմ
Թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ
գտնուած ապրանքները, թէ՛ թօնաֆիլէի
վերաբերեալ և թէ՛ արանց ու կանանց յա-
տուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան
կը միացնեն տօկունութիւն, և դիւրամատ-
չելի գիներու առուելութիւնն ալ կ'ընծայեն
հասարակութեան:

Այս վարդեան մեծապէս գոհ
թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները:

Կ'արժէ որ Շուկայ, Ելլազ ամէն ընտան
այցելէ անգամ մը այս երկու վաճառատուն-
ները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

1—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԴՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ
դատ, մասնագիտաբար և երկար տարիներէ
ի վեր կը դարձնէ ստամոքսի, աղեաց,
միզային ճանքաներու հիւանդութիւնները,
ջղային տկարութիւնները, հին և նոր գա-
ղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ ա-
ռանց ստամոքսի խանգարման և նարագոյն
մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ
վերջը: Զօրեքշաքի օրերը միայն ձրի: 1—10

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը չի գտնուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՆԱԴՐՈՒԹԻՈՒՆ)

Թոքախտ, պրոնչիա, հաղ, հարբուխ և բարակեցաւ, և տղայոց անդամներու թուլութիուն, խոլ (սրբաճա) և բոլոր արեան տղիտներու համար անգին դարման մըն է: Ընտան անգամ անոններով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Ըմեն տարի հազարաւոր տղայք մահուանէ, աղատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը՝ կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնոյ, կեանք կուտայ: Դեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Սիշտ վրան այս պատկերով վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Շիշերու փայտաօր ուշադրութիւն ընել պէտք է:

26

Բոլոր բեղաժողովները և բեղաձառուները կը ծախեն:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ: ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման բուսակի հիւղեր
VICTORIA ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ Կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
 բուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կուենան,
 սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000
 Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
 տյական հրովարտական եւ ուղղակի
 կառավարութեան հսկողութեան ներ-

քէն:

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵԶԷՃԵԱՆ

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանրա
 եւ Քրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
 ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՅԱՅԵԱՆ

Պոլիս Բաքրեքոզլու խան

10--50

ՄԱՍԻՍ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

7 ՄԱՅԻՍ 1905

ԱԼՔՈԼԱՄՈԼՈՒԹԵԱՆ ԴԵՍ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

ԼԱՌԱԳՈՑՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ

ԵՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԹԵՐԹԵՐՈՒՆ

Մասիսի ներկայ համարի յաջորդ էջերուն մէջ նոյնութեամբ և ամբողջութեամբ կը հրատարակենք ծանօթ վաճառական Յովհ. Էֆ. Թաւաճեանի ընդարձակ մէկ նամակը որ մեր բարձրերուն ու մեր լրագրութեան համար բոլորովին նոր եղող եզրակացութեան մը կը յանգի, — հրաւեր մը ու առաջարկ մը նոյնքան ինքնատիպ ու հետաքրքրաշարժ որքան մարդասիրական ու հանրօգուտ:

Թաւաճեան Էֆ.ն, ինչպէս յայտնի է, ո՛չ միայն կը սիրէ բարեգործել՝ նպատակելով կրթական, եկեղեցական ու մարդասիրական հաստատութեանց, և գրականութեան ուլ, — որուն ապացոյցը տեսանք գրաւոր քարոզներու, մրցումին առթիւ զոր հաստատեց Ս. Պատարիարք Հօր հովանաւորութեան ներքեւ, — այլ և գրիչը կը միացնէ գործին, և օգտաշատ տեսութիւններ, ազնիւ թելադրութիւններ կը պարզէ երբեմն թերթերուն միջոցաւ, ինչպէս իր գրուածքները երեւցած են Արեւելի, Բիւզանդիոնի. Մանգումի մէջ: Այս անգամ, պատիւ ըրած է Մասիսին ուղղելու իր հակալքողական պայքարի առաջարկը, որուն միակ նպատակն է լրագրական յօդուածներու միջոցաւ ժողովրդեան ամէն խաւերուն մէջ տարածել արբեցողութեան վնասները, և այդ մոլութենէն բռնուողները ետ կեցնելու ջանք մը ընել, որուն գերազանցապէս փրկաբար հանգամանքը շեշտուելու պէտք չունի:

Միայն, կ'արժէ շեշտել սա ուշագրաւ պարագան՝ թէ Թաւաճեան Էֆ.ն վերայական գործ մը, — կամ բուն բառովը՝ ձրի աշխատութիւն մը, — չէ որ կըսպասէ մեր գրագէտներէն, այլ լաւագոյն յօդուածները գորողներուն կը խօստանայ դրամական մրցանակներ, որոնց գումարը կը հասնի երեսուներկու անգլ. ոսկիի, և անոր մօտ գումար մըն ալ՝ երեսուց անգլ. ոսկիի՝ այդ յօդուածները հրատարակող թերթերուն, համադրւած ՎԱԹՍՈՒՆ ԵՐԿՈՒ ԱՆԴԼ. ՈՍԿԻ, զանազան աստիճաններով ու բաժանումներով որոնց մանրամասնութիւնները նշանակուած են իր նամակին մէջ:

Կը սիրենք յուսալ թէ մեր ազնիւ պաշտօնակիցները, — թէ՛ օրաթերթերը և թէ՛ պարբերականները, — սիրալոյսով ընդունելութիւն մը պիտի ընեն Թաւաճեան Էֆ.ի իրենց ուղղած հրապարակային հրաւերին, արտատպելով իր նամակին այն մասը որ կը վերաբերի ալքոլամոլութեան դէմ գրուելիք յօդուածներու օգտակարութեանը ու բարեբար արդիւնքին, և մեր հրապարակագիրներն ու գրագէտները հաճոյքով պիտի նուիրեն իրենց մօքին լաւագոյն արտագրութիւնները առաջարկուած նիւթին՝ ալքոլամոլութեան վրայ գրելով սիրուն, համոզիչ, տպաւորիչ, ժողովրդական յօդուածներ որոնց համար բաց պիտի ըլլան Մասիսի էջերը, ինչպէս անշուշտ ամէն ազգ. թերթերու էջերն ալ:

ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Սիւնոքական որոմանց տուրքը:—Արմաւի, ուխտագնացութիւնը եւ գինեւան հատոյթը:—Գրչի պայքար արեւելքեան դէմ:—Համագոմս հրաւիր մը ազգ. թերթում:

Ն.Ի.Խ. ԵՐԵՎԱՆ, 2 Մայիս

Յարգոյ Սմբատիւր Մասիսի

Թէեւ ըլլայ ներկայ գրութեանս մասնաւոր նպատակէն դուրս, բայց առիթէն օգուտ քաղելով կ'ուզեմ Սինոդէն բացատրութիւն մը խնդրել: Հարկ է ըսել թէ եկեղեցականաց դիրքը բարձր պահելու ջերմեանդ փափաքող մըն եմ, ինչպէս զանոնք քննադատելու գրեթէ հակառակող մը, սակայն ինչո՞ւ ծածկել իրողութիւնը թէ անոնք ալ մարդ են և սխալական: Եկեղեցականներն ալ ի պահանջել հարկին՝ ամենայն յարգանք քննադատելը՝ օգտակարութենէ դուրկ չէ: Կը սխալիմ թերեւ, բայց ինձ չափազանցօրէն տարօրինակ թուեցան Սինոդի պաշտօնական թերթէն ելած հետեւեալ քաղուած քերքը, որոնք հրատարակուած էին Պոլսահայ լրագրաց մէջ, այսինքն. —«Զրկել ապօրինի կենակցողներն չաղորդութիւնից... և եթէ միայն զղջան՝ արժանացնել վերջին չաղորդութեան: Այդպիսիներին մահուան դէպքում քահանան պարտաւոր է սև փիլոնով լուռ ուղեկցել դադարին տնից գերեզմանատուն, ... միայն «Ողորմած Աստուած» երգելով յանձնել դիակը հողին...»: Եկեղեցւոյ մեծ ժողովը այսպէս յարմար դատե՞ր է. ոմանք եթէ չափազանց խիստ ալ գտնեն այս որոշումը, գէթ ես անոնց դադարաւորակից չեմ: Բարոյականի բարձրութիւնը, ամուսնացեալ կենաց մաքրութիւնը և ընտանեկան յարկին սրբութիւնը որքան շատ յարգուին՝ այնքան աւելի կ'ազնուանայ այդ վիճակին մէջ գտնուող ժողովուրդը. ուրեմն այսքանը շատ բարի: Անբացատրելի կէտը սա է՝ որ այս աստիճանի նախանձախնդրութիւն ցուցնող նոյն Սինոդին

նոյն նիստին մէջ հետեւեալ որոշումը տրուած է. «Սինոդը լսեց ծխատէր Տէր Յովհ. քահանայի ապօրինի կնապահութեան դործը... և որոշեց դադարեցնել նրան անորոշ ժամանակով ապօրինի կնապահութեան համար, մինչև որ կ'ապաշխարի և կը հեռացնի տանից իւր հոմանուն» — այսչա՞փ միայն: Ժողովրդական ո՞ճ մը կայ զոր թերեւս ոմանք իրաւամբ պիտի գործածէին այժմ, բայց ես կը հաւատամ «բարկանայք և մի՛ մեղանչէք» ի: Սինոդը իմինիս նման գայթակղեալ մտքերու բացատրութիւն մը տալու է կարծեմ, թէ ինչո՞ւ միեւնոյն զգուելի, ապականացուցիչ և անբարոյ կենցաղը՝ երբ զայն գործողը քահանայ մը ըլլալուն համար աւելի չար օրինակ ըլլալու ակններև պարագայով ծանրացած է՝ փոխանակ յանցանքը սաստկացնելու և աւելի ծանր պատժոյ արժանի համարողու, ընդհակառակը շատ աւելի թեթև պատժոյ կը դատապարտուի: Ամէն առողջ նկատողութիւն և խորհրդածութիւն պիտի պահանջէր որ քահանան «անորոշ ժամանակով դադարեցնելու» տեղ յաւիտենապէս դադարեցուցուէր և եթէ ապաշխարէր իսկ՝ միայն չաղորդութիւն տըրուէր (թողլով Աստուծոյ՝ վերջնական դատաստան ընել այդպիսիին) առանց արտօնելու որ սև փիլոնով քահանայ մը անգամ ներկայ գտնուի անոր թաղման: Ներող գրտնուիլը քրիստոնէութեան առաջին պայմաններէն մէկն է, բայց եկեղեցականաց յանցանքները բոլորովին անպատիժ թողուլը կամ զայնս շատ մեղմ պատիժներու ենթարկելը (որուն կէսն ալ չի քաշած՝ մնացեալը ներելը) վախճամ մին է այն պատճառներէն որոնց հետեւանք մեր կղերին վարուց մասին ամէն օր դանգատ կը կարդանք լրագիրներու մէջ: Մէկ քանի խիստ պատիժներ, անաչառ գործադրութեան գրուած՝ աւելի չուտ կարգի, կանոնի և պատշաճութեան օրինաց հնազանդ և զայնս յարգող պիտի ընեն մեր կրօնականները՝ որքան չի պիտի ընեն հարիւրաւոր յորդորներ և խրատականներ: Կարծեմ այս է Հռովմէական Եկեղեցւոյ պաշտօնեաներուն աւելի օրինապահ ըլլալուն գաղտնիքը: Սինոդը մեր մէջ հոգեւորական ամենէն բարձր

հեղինակութիւնը ըլլալով, անկից սկսելու է ասոր օրինակը: Կրօնի և կրօնաւորներու պատկառ յարգանք ընծայող մը, առանց սպասելու Սինոդին բացատրութեան՝ իր կողմանէ շատ կծու մեկնաբանութիւններ տալու փութկոտութիւնը պիտի յուցնէր թերեւս, բայց ես կը մաղթեմ և կը յուսամ որ Սինոդը գոհացուցիչ բացատրութիւն մը կարենայ տալ:

* *

Ուրիշ խնդիր մը որ աւելի մօտէն յարաբերութիւն ունի գրութեանս բուն նըպատակին հետ, սա է. Բիւզանդիոնի 2508 թիւին մէջ կը կարդանք, — «Արմաշի Զարիսափանին տօնն ալ դժբաղդաբար տաճարէն դուրս՝ կայթատօնն է Վէնիսի և Բագոսի. մեղք: Այս և այսպիսի ընտաններու վրայ Դուրեան Սրբազան խօսելու էր յԱրմաշ, Խաչվերացի տօնին օրերը: Ոգելից ըմպելեաց առուտուրը բացարձակ արգելուելու էր եկեղեցոյն սրճարանին մէջ և մօտերը, բայց այդ ամէն խայտառակութեանց աչք կը գոցուի, զի եկամուտ կը հայթայթեն վանքին»:

Այս տողերուն գրողը վերջերս բաւական յուզում հանեց իր գրած յօդուածներուն շուրջը. և թէև ես իրեն գաղափարակից չեմ յամենայնի, մանաւանդ երգ երգոցի մասին գրածներուն, բայց այս գրածին մէջ իրաւունք ունի՝ եթէ նկարագրածին պէս է եղելութիւնը. վերոյիշեալ պարբերութիւնը կարդացած օրս եկեղեցականի մը այցելութիւնը ընդունելով, հարցուցի իրեն թէ ճշմարիտ էր ա՛յս. « Ի՞նչ կը կարծես որ ըլլայ ուխտագնացութիւնը» ըսաւ «բանայիւրի համար կ'երթան չատեր»: Եթէ իրաւէն ցարդ այդպէս եղած է, չէ՞ք կարծեր որ այլեւս ժամանակ է վերջ տալ ժողովրդական այս սխալ ըմբռնումին, պէտք եղած քարոզութեամբ: Ասոնք այնպիսի բաներ են որոնք համայնքի մը մտաւորական և հոգեկան մակարդակը ցոյց կուտան: Դպրոց և դաստիարակութիւն բաւական չեն այդ մակարդակին բարձրանալուն համար, այսպիսի գործնական նիւթերու վրայ տրուած քարոզութիւններ պիտի սթափեցնեն զիրենք: Մարդիկ այնքան տեսեր են այս բաները որ այլևս անդգայ դարձեր են

հանդէպ անոնց անվայելութեան: Թողո՞ւ ռւրեմն որ այսպէս շարունակէ. քա՛ւ լիցի:

Անոնք որ չի գիտնալով կը մեղանչեն աւելի նուազ պիտի պատժուին քան անոնք որոնք գիտութեամբ կը մեղանչեն. և եթէ մենէ ոմանք գիտեն և սխալը գործողին չեն զգացներ, անոնք ալ անմասն չի պիտի մնան դատապարտութենէ: Եթէ իրաւի, եկեղեցոյ սրճարանին մէջ ոգելից ըմպելիք կը վաճառուի, ամէն եկեղեցաւէր անձ պարտաւոր է իր բոլոր ուժովը բողոքել ատոր դէմ. մինչև որ բոլորովին արգելուի այդ բանը: Փոյթ չէ թէ ատով եկեղեցին գոցուի: Լաւ է այդ պատճառաւ գոցուիլը՝ քան այդպիսի աղբիւրէ մը եկած հասոյթով բաց մնալը: Բայց ո՞վ կը հաւատայ որ այդ եկամուտէն կ'ստուգուին Դպրեվանդաց պահպանումը: Ահաւասիկ հրապարակաւ կը խօստանամ վըճարել այդ առուստուհն եկած շահուն պակասութիւնը, եթէ գոյանայ, պայմանաւ որ եկեղեցոյ բեմէն բացատրուի թէ ինչո՞ւ վերցած է ոգելից ըմպելիքը այդ սրճարանէն և պէտք եղած յորդորը կարդացուի ոչ միայն այդ սրճարանին մէջ ոգելից ըմպելիք չի պահանջելու, հապա նաև քանի մը խօսք ևս ըսուի ընդհանրապէս ոգելից ըմպելեաց վնասակարութեան վրայ, միանգամայն խրատելով ժողովուրդը որ ամէն ատենէ աւելի բազմութեամբ դիմեն եկեղեցոյ սրբաւորանը իրեն յոյժ պատուաւոր տեղ մը, քանի որ ոգելից ըմպելիք չի ծախուիր հոն և ատով ասպացուցանեն թէ իրենք ալ համակարծիք են եղած պատշաճ տնօրինութեան եւայլն:

Դադաքիս մէջ Երէնք է որ որեւէ եկեղեցիէ մը դոնէ 200 քայլ հեռու պէտք է ըլլայ ամենէն մօտ գինեւորանը:

* *

Այժմ գանք գրութեանս բուն նպատակին: Ամէնէն բարի մարդոցմէ մին էր Նոյ Նահապետ: Հաւանականաբար անտեղեակ գինիի ազդեցութեան՝ ինքն եղաւ առաջին գինովը և այս ցաւալի, յոռի ու մոլի վիճակին պատիժն ալ անմիջապէս ստացաւ, թո՛ղ դարեւրով պատմութեան յիշատակութիւնը: Յիշ-

ուած չէ թէեւ՝ սակայն շատ հաւանական է որ այս առաջին եւ վերջին արեւեցեալ վիճակը եղաւ Նոյի։ Անկից ի վեր իր օրինակին հետեւողներ եկած եւ գացած են աշխարհիս վրայ եւ որ ցաւալին է՝ այսօր ալ բազմաթիւ են եղողները, որոնց ամէնքն ալ սակայն դժբաղդաբար Նոյի նման «այս վերջինն է» չեն ըսեր։ Աշխարհի վրայ գտնուած պատուհասներուն ամենէն մեծը ոգելից ըմպելիքն է։ Անոր դոճերը ոչ թէ ուրիշ հիւանդութիւններու պէս քանի մը օրեր կամ շաբաթներ կը չարչարեն ենթական, հապա տարիներ, եւ ո՛չ միայն ենթական՝ հապա անոր ընտանեաց անմիջական եւ հեռաւոր անդամներն ալ եւ աստիճան մըն ալ ամբողջ մարդկութիւնը։ Ամերիքեցի Մէքսիքեցի թերթը կը հաւատայ որ շարունակական ալքօլամոլութիւնը հաւանականաբար կը բացատրէ ճաբոնական յաղթութիւններն ի Մանչուրիա։ Մինչդեռ Միքստոյին զինուորները մեծաւ մասամբ ոգելից ըմպելիք չեն գործածեր, դիտողները յաճախ կը խօսին ռուս արեւեցեալ զինուորներու վրայ։ Բորդ Արթիւրի մէջ անբարոյութիւնը եւ արեւեցողութիւնը այնքան լիտի եւ չափազանց եղած է որ Եւրոպական ու Ամերիկեան լըրադրաց մէջ աննկարագրելի ըլլալու աստիճանին հասած է։

Վայրենի կամ անքաղաքակրթեալ երկիրներ նախ միսիօնարները Գրիստոնէութիւնը կը տանին, իսկ անոնց անմիջապէս հետեւող վաճառականներն ալ... ոգելից ըմպելիքը։ Մին կը փրկէ զիրենք, միւսն ալ անմիջապէս կը կործանէ։ Այնպէս որ միսիօնարութիւնը հոգեւոր փրկութեան գործին մէջ հաղիւ յաջողած՝ անմիջապէս ոգելից ըմպելեաց վեասներէն ազատելու քարոզութեան գործին կը պարտաւորի դարձնել իր ուշադրութիւնը, այս վերջինը յաճախ դժուարագոյն գտնելով։ Բազում օրէնքներ դրուած են տեղ տեղ, բայց մեծաւ մասամբ անօգուտ։ Ոմանք բոլորովին արգիլած են ոգելից ըմպելեաց գործածութիւնը։ Միացեալ Նահանգաց մէջ հացի համար ծախսուած գումարէն շատ աւելի կը ծախսուի ոգելից ըմպելեաց։ Նիւ Եորքի մէջ

1000ի չափ փուռ կայ հացի, իսկ 12,000ի չափ գինետուն։ Ուրիշ երկիրներու մէջ ալ այս համեմատութիւնները աւելի կամ նուազ ճշմարիտ են։ Աշխարհի վրայ ամէն բան սոսկութիւն է։ Երանի այն մարդուն որ բարի սովորութիւններ ունի, վա՛յ այն մարդուն որ մոլի սովորութիւններ ունի։ Ոգելից ըմպելեաց սովորութիւնը կոտորելու համար տեսակ տեսակ դրութիւններ կան եւ զանազան հաստատութիւններ, որոնց ամէնքն ալ իրենց մասնակի օգտակարութիւնները ունին։ Երկիրներ կան ուր ոգելից ըմպելեաց գործածութիւնը շատ աւելի այսպանելի սովորութիւն մը կը նկատուի քան այլ տեղեր։ Նոյնպէս ընտանիքներ կան որոնց տան մէջ բնաւ մուտք չի գտնել ըմպելիքը։ Դասակարգեր կան որոնց վերաբերողները, ըստ ընկալեալ սովորութեան, ոգելից ըմպելիք գործածելու չեն, ինչպէս նաեւ թատրոն եւ պարահանդէս յաճախելու չեն, օրինակի համար, եկեղեցականները այս երկրին մէջ բնաւ ոգելից ըմպելիք չեն գործածեր։ Ինծի շատ զարմանալի կը թուի որ մեր մէջ եկեղեցականները աշխարհականներու պէս եւ անոնց չափ առատօրէն իսկ եթէ խմեն՝ աւելի պակաս ուշադրութիւն կը հրաւիրեն իրենց վրայ՝ քան երբ իրենց պահքը ուտեն։ Բան մը որ, ըստ իս, ուղտի եւ մրջնակի համար ըսուածը կը շօշափէ։ Բանի տուններ աւերակ դարձած են, քանի բարի կիներ ապերջանիկ եղած են, քանի զաւակներ չար օրինակ առած են, քանի աղգականներ մտահոգ եղած են, քանի բարեկամներու սրտեր վշտով լեցուած են՝ արեւցողի մը պատճառաւ։ Մօր մը սիրտը ի՛նչ աստիճանի սիրով որ զեղուն ըլլայ իր զաւակին համար, նոյնքան աստիճանութեամբ կը խոցոտի երբ անոր ոգելից ըմպելեաց գերի ըլլալը կը տեսնէ։ Կին մը ի՛նչ աստիճանի խանդավառ սիրով որ վերաբերի իր ամուսնոյն՝ այնքան վշտով եւ դառնութեամբ լեցուած կը գտնայ իր բաժակը երբ չի գիտեր թէ ամուսինը խելքը գլուխը թէ արեւցած տուն պիտի դառնայ, եւ ի ժամո՞ւ թէ ի տառածամու։ Բայց իմ նպատակէս դուրս է արեւցողութեան վեասներուն վրայ ճառել եւ

կամ անոր այլանդակ հետևութիւնները ի լոյս բերել, քանզի այսօր իմ խօսքս այնպիսեաց հետ է որոնք արդէն այս բաներուն քաջ գիտակից են և արբեցողութեան վնասները նկատագրելու և անկից զգուշացնելու համար՝ սրտաշարժ, մտազդեցիկ, համոզիչ և հմտալէց գրութիւններ հեղինակելու կարողութիւն ունին:

Մեր մէջ, որքան ես գիտեմ, ո՛չ արբեցողները բուժելու հաստատութիւն մը կայ և ո՛չ ալ այս կամ այն դրութիւնը (système) ջատագովող մարմին կամ ընկերութիւն մը: Ուրեմն միակ օգտակարութիւնը զոր կրնանք ունենալ մերիններուն համար, (որքան ես կարող եղայ մտածել) լրագրաց մէջ այս հիւթին վրայ գրուած յօդուածներ հրատարակելն է: Արբեցողութեան վրայ գրուած գիրքեր օգտակար կրնան ըլլալ, բայց վախճամ չեն կարդացուիր. յօդուած մը համառօտ կ'ըլլայ և թերթի մը մէջ գրուած ըլլալու առաւելութիւնն ալ ունի, այսինքն արբեցող մը լրագիր մը կը կարդայ հարկաւ և թերեւս անգամ մըն ալ այսօրինակ յօդուած մը կարդալու փափաքը կ'ունենայ և թերեւս այնքան կ'ազդուի անկից որ կը թողու իր մօլի սովորութիւնը կամ զայն այն աստիճան կը մեղմացնէ որ ո՛չ իրեն ո՛չ ալ մարդկութեան վնասակար ըլլայ: Եւ ինչո՞ւ չի հաւատալ ասոր: Նախ որ լրագրութիւնը այսօր դաստիարակիչ ամէնէն մեծ գորութիւնն է. երկրորդ որ անձամբ իսկ ծանօթացած եմ այնպիսի հաստատեալ և վկայեալ գիտնականներու որոնք քարոզի մը կամ յօդուածի մը իրենց վրայ ըրած ներդրածութեամբը որոշած են թողուլ այդ արմատացած ունակութիւնը և մինչդեռ առաջ անկարելի էր իրենց մտնել լաւ ընկերութեան մը մէջ, այժմ ամէն տեղ սիրով կը հրաւիրուին և այսօր իրենք եղած են արբեցողութեան ամենէն մեծ թշնամիները: Եւ եթէ քարոզ մը, յօդուած մը իր ազդեցութիւնը չունի, ապա ուրեմն ի՞նչու կը քարոզեն և ինչո՞ւ կը գրեն:

Արդ, նկատելով որ Մասիս մեր ամէնէն հին թերթերէն մէկն է և որքան կը տեսնեմ՝ բո-

լոր հայաթերթերու համակրութիւնը կը վաշելէ առանց բացառութեան, ուստի յարմար դատեցի անոր միջոցաւ հետեւեալ առաջարկութիւնը ընել, խնդրելով և յուսալով որ ամէն հայաթերթ արտատուէ զայն, այսինքն այն թերթերը որոնց խմբագիրները կը համոզուին թէ իրաւի օգտակար բան մըն է այս, որով իրենք ալ յօժար են և պատրաստ օգնելու, թէ՛ այս առաջարկութիւնը հրատարակելով և թէ՛ բանալով իրենց սխալակները արբեցողութեան վրայ գրուած յօդուածներու: Եթէ տեսնուի որ սպասուած արդիւնքը ունեցաւ՝ միեւնոյն բանն ընելու գիտաւորութիւն կայ խաղամոլութեան համար: Ահաւասիկ առաջարկութիւնը:

Մրցանակներ տալ արբեցողութեան վնասներուն և դարմանին վրայ գրուած և հրատարակուած յօդուածներու, — որոնց նպատակը ըլլայ ընթերցող արբեցողը համոզել և հրամարեցնել իր այդ մօլի ունակութենէն, — հետեւեալ պայմաններով:

Յօդուածները 1000 բառէ աւելի և 1500է պակաս պէտք է ըլլան և հրատարակուած՝ առաջարկութեանս երեւնալէն մինչև հոկտեմբեր 1 (Ը. Ե.):

Թուրքիոյ մէջ հրատարակուած որ և է հայ լեզուաւ թերթի մէջ երեւցած այսպիսի յօդուածներու լաւագոյնին հեղինակը պիտի ստանայ 10 անգլ. ոսկի: Երկրորդ լաւագոյնը 5 անգլ. ոսկի: Երկու հատ երրորդ լաւագոյնները 3 ական անգլ. ոսկի: Երեք հատ չորրորդ լաւագոյնները 2ական անգլ. ոսկի: Հինգ հատ հինգերորդ լաւագոյնները մէյ մէկ անգլ. ոսկի:

Որովհետեւ նպատակնիս է կարելի եղածին չափ շատ թուով յօդուածներ գրուած տեսնել թերթերու մէջ, որպէս զի ընթերցողները գոնէ մէկը կամ միւսը կարգան և եթէ մէկէն չ'ազդուին՝ թերեւս միւսը ներդրած իրենց, ուստի հետեւեալ կարգադրութիւնը ևս որոշուած է թերթերու համար:

Առաջին մրցանակը ստացող յօդուածը հրատարակող թերթը պիտի ստանայ 10 անգլ. ոսկի: Երկրորդ մրցանակը ստացող յօդուածը

հրատարակող թերթը պիտի ստանայ 5 անգլ. ոսկի: Ասոնցմէ զատ վերոյիշեալ 12 հատ մրցանակ ստացող յօդուածներուն առաւելագոյն թուովը հրատարակող թերթը պիտի ստանայ 5 անգլ. ոսկի, պայմանով որ՝

Առաջին 10 և 5 ոսկին ստացող թերթը կամ թերթերը՝ ի նորոյ հրատարակեն Ա. և Բ. մրցանակ ստացող յօդուածները, որ մը մէկը, որ մըն ալ միւսը, (եթէ ուզեն՝ իրաւունք ունին ամբողջ 12 մրցանակ ստացող յօդուածներն ալ կարգաւ հրատարակելու):

Երկրորդ 10 և 5 ոսկին ստացող թերթը կամ թերթերը պարտաւոր են ամբողջ 12 յօդուածներն ալ կարգաւ հրատարակելու:

Մրցանակ ստացող յօդուածագիրները ազատ են անշուշտ իրենց ստացած գումարը բարեգործական հաստատութեան մը նուիրել, եթէ ուզեն, այնպէս որ այս նիւթին վրայ յօդուած գրող մը անպատճառ մրցանակ չահելու համար գրած չ'ըլլար, եթէ նոյնիսկ մրցման դէն իր յօդուածը կամ յօդուածները: Մրցման գրուած եւ մրցանակ չի չահած յօդուածներուն որոնք ըլլալը երբեք չի պիտի հրատարակուի: Գալով թերթերուն՝ անոնք ստացած գումարնուն փոխարէն կարօտ եւ արժանի համարած անձանց կամ հաստատութեանց բաւականաչափ թերթ պիտի խրկեն, տարեկան կամ վեցամսեայ, ինչպէս որ կ'ուզեն, որոնց գումարը, ըստ թերթին սովորական գնոյն 20. 15. 10 կամ 5 անգլ. ոսկեայ յանդի, ըստ պարագայի: Կրնայ պատահիլ որ միեւնոյն հեղինակը ստանայ ամբողջ մրցանակները, ինչպէս միեւնոյն թերթը ստանայ թերթերու յատկացեալ ամբողջ գումարը:

Յօդուածագիր մը որ կուզէ մրցման դնել իր յօդուածը, զայն պարունակող թերթէն օրինակ մը խրկելու է H. S. Tavchanjian, New York հասցէով, եւ եթէ ծածկանուն ստորագրուած է, բուն իր անունն եւս յիշելով, որ միայն մրցանակը չահելու պարագային պիտի հրատարակուի, այն ալ եթէ ինքը կանխաւ առարկուած չի յայտնեալ առ այս:

Ուրիշ մրցանակի մը առթիւ տեսնելով որ ի գուր կարգ մը անհաճոյ մեղադրանաց եւ

քննադատութեանց կ'ենթարկուին քննիչ յանձնախումբի անդամոց անունները, որոշուած է հրատարակութեան չի տալ այս անգամ քննիչ Յանձնախումբի անդամոց անունները: Յանձնախումբը ինձ պիտի յանձնէ իր որոշումը որ պիտի հաղորդուի Մասիսի, Ուրկից դարձեալ այն թերթերը որոնք յօժար են ծանուցանել արդիւնքը՝ ազատ են արտատպել զայն, որու համար եւս կանխաւ չնորհակալուած չի յայտնելով, ինչպէս և Մասիսի, եթէ հաճի հրատարակել զայս եւ ժամանակին ալ մրցանակներու ցանկը, մնամ

Յ. Ս. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ

ԳԱՐՈՒՆՆ Ե ԵԿԵՐ



Պ. Զ. ԻՆ

Նորէն ծառերն են ծաղկեր
Նախշուն հագեր դաշտն հովիտ.
Խօսնակն երգերն է առեր,
Խոխոջք առուակ իր վճիտ:

Երկնից կապոյտ ջինջ լանջքէն
Լալկան ամպերն են ցրուեր,
Թախիժք խնդի փոխուեր են՝
Ժպտին արեւն ու սարեր:

Բամբ հոյլ ի հոյլ թռչնեկաց՝
Ճռուողն ծոցն անտառին,
Բիւր մեղեդիք երկնասլաց՝
Աւետեն մուտքը գարունին:

Սէր ներշնչէ ամենուն
Մայր բնութիւն կենսատու,
Ծիծառն դարձեր է իր բոյն
Կարօտի սէրն երգելու:

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴ.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Վանքին նախորդ ելեւմտից տեսուչ Տ. Ղեւոնդ վրդ. Մաքսուտեան ամսոյս Յին Եաֆաէն մեկնած է Կ. Պոլիս գալու համար ուր հաւանաբար կը հասնի յառաջիկայ երկուշաբթի: Երուսաղեմի վանական հաշիւները այստեղ Յանձնաժողովի մը քննութեան յանձնելու գաղափարը ընդունուած է արդէն Կեդք. Վարչութեան կողմէ և Յանձնաժողովի անդամներուն ընտրութեան մասին համաձայնութիւն գոյացած է:

ԳՐՈՂ ԸԼԼԱԼ

Գրողի կեանքը, իր այն բարոյական դո-
հացումէն զատ, որմէ՝ ուղղակի կ'առաջնոր-
դուի իր գործունէութիւնը, ունի հաճոյքներ
ու անակնկալներ, զորս իրեն կը հայթայ-
թեն իր ընթերցողները:

Հայ գրողը, երբ մասնաւանդ արուեստով
խմբագիր ալ է, յաճախ առիթը կ'ունենայ
իր ընթերցողներուն հետ հաղորդակցութեան
գալու խնդիրներու շուրջը, որոնք կրնան
լուրջ զբաղում մը հայթայթել իրեն, ու իր
միտքը գրաւել դէպի այն կողմը՝ ուր կ'ա-
ռաջնորդեն մտացի ընթերցողներ՝ իրենց ներ-
կայացուցած աս կամ ան հարցով:

Այսպէս, թղթաբերը ատեն ատեն բան մը
ունի բերելիք իրեն, արթնամիտ ու հետա-
քըրքիր ընթերցողներու կողմէ, որոնք գրա-
կան մասնաւոր կամ ընդհանուր հարցերու
շուրջը խնդիր մը կը յուզեն, առաջարկ մը
կը ներկայացնեն, կամ հարցում մը կ'ընեն:

Գլխաւորաբար հայ պատանիներն են որ
կարեւոր մեծամասնութիւն մը կը կազմեն,
այս հարցապնդումներու գործին մէջ, գրա-
կանութեան սէրովը վառուած երիտասարդ-
ներ, որոնք շարունակ նիւթ կը ստեղծեն մայ-
րաքաղաքացի գրողին հետ հաղորդակցու-
թեան մէջ մտնելու, գտնելով հարցումներ,
առաջարկներ, տեսութիւններ ու նկատողու-
թիւններ՝ գրական զանազան հարցերու
շուրջը:

Իրաւ է թէ, յաճախ նշանակութենէ զուրկ
պարագաներ է որ կը գրադեցնեն զիրենք,
և իրենց մտածումները չեն արժեք լուրջ շա-
հագրագութիւն մը, սակայն անոնց մէջ կան
երբեմն ալ գողտրիկ ուլասիւսներ՝ ուր կ'ար-
ժէ կանգ առնել:

Այդ տեսակէն, ստացած նամակներուս
մէջ, երրորդ անգամն է որ կը հանդիպիմ
հարցումի մը՝ որով գերազանցապէս զբաղած
ըլլալ կ'երեւայ գաւառացի հայ պատանու-
թիւնը, գրականութեան մշակումի սէրովը
գրաւուած դասակարգը:

Նկատելով որ այդ երեք նամակները մեր-

կացուելով իրենց անհատական մասնաւոր
հանգամանքէն և ընդհանրացուելով՝ կը խը-
սացնեն այն մտադրադուր որով պաշարուած
են գաւառացի գրասէր պատանիներ ու երի-
տասարդներ, կը մտածեմ թէ հրապարակային
պատասխան մը այդ երեք նամակներուն՝
կրնայ չահեկանութենէ ու օգտակարութենէ
զուրկ չըլլալ:

Ահա՛ թէ ինչ կը հարցնէ նամակագիրնե-
րէն մէկը, որուն խօսքը կը կրկնեն մօտաւո-
րապէս միւս երկուքը. —

«Բաւական ատենէ ի վեր է որ,
գրականութեամբ կը զբաղիմ և ըստ
կարի կը մշակեմ զայն: Գրականութեան
հուրը իր կայծը վառած է հոգիւիս մէջ,
և չեմ կրնար ես ձեռքովս մարել զայն:
Կը գրեմ քերթուածներ ու արձակներ,
զորս կը շրջեմ տղարան: Սակայն կը
ցաւիմ ըսել որ տակաւին անոնց ո՛չ մին
հրատարակուած է, պսակելու համար
խեղճ հայ պատանիին քրտնաջան վաս-
տակը: Այս անգամ միտքս հարցում մը
կ'իյնայ. դիմել Ձեզ և խնդրել որ հա-
ճիք յանուն մարդասիրութեան ըսել թէ,
արդեօք ինչո՞ւ չեն հրատարակուիր իմ
քերթուածներս ու արձակներս: Դուք
որ, Տէ՛ր, գրող էք, խմբագիր էք, և
զիտէք բոլոր պատճառը այս զանցա-
ռութեան, իբր չէ՞գոք մէկը կրնա՞ք
արդեօք բացատրել ինձ թէ, ինչո՞ւ մէկ
կողմ կը ձգուին իմ գրուածքներս: Կը-
սէ՞ք նաև թէ արդեօք ի՞նչպէս կրնամ
գրող ըլլալ: Հաւատացէ՞ք որ մեծ բա-
րիք մը ըրած պիտի ըլլաք ու անհունա-
պէս երախտապարտ թողած հայ գրա-
տենչ երիտասարդ մը»:

«Հայ գրատենչ երիտասարդ»ը պէտք չու-
նի անշուշտ ինքզինքը մինակ զգալու իր այդ
դժբաղդութեանը մէջ, որովհետեւ իր սըր-
տունը տրտունջն է հաւասարապէս այն ամէն
գրատենչ պատանիներուն, սկսնակներուն,
որոնք ստուար թիւ մը կը կազմեն:

Ամբողջ դասակարգ մը կը կազմեն այն
գրասէր պատանիները որոնք շարթուան ա-
մէ՛ն թղթատարով բա՛ն մը ունին զրկելիք

խմբագրութիւններու : Եւ սակայն անոնք
չեն հրատարակուիր, չեն հրատարակուիր յա-
ւիտենապէս : Եւ անոնց հնդինականներն ալ չեն
յուսահատիր : Եղական անձնութիւնով
մը, և համբերութեան ու յարատեւութեան
անհաւասարելի ոգիով մը՝ որ առաքինու-
թեան մը աստիճանին կը հասնի, անոնք
յօդուած կը ղրկեն խմբագրութիւններու,
ուր ուրիշ բանի չեն ծառայեր, բայց եթէ
անհրատարակելի ձեռագիրներու դէպք ստուա-
րացնելու :

Ո՛չ մէկ իրաւունքով կարելի է զիրենք
արհամարհել իրենց այս գրասիրական եռան-
դին ու փութաջանութեան համար, և երես-
նուն տալ՝ իրենց դժբաղդ անյաջողու-
թիւնը և անտեսումը : Ընդհակառակը պէտք
է կարեկցիլ գրականութեան այս անյաջող
վաստակաւորներուն, և կարելին ընել զիրենք
առաջնորդելու համար յաջողութեան ճամ-
բուն մէջ, — որովհետեւ գրականութեան սէրը՝
որով ա՛յնչափ բուռն կերպով բռնկած ըլ-
լալ կ'երեւան գաւառացի պատանիներէ
չատեր՝ ոչինչ ունի իր մէջ՝ արհամարհելի,
և որովհետեւ գրելու յաջողութեան կայանը
առաջնորդող փարոսներու պակասէն մոլո-
րած՝ այսօրուան այդ ճամբորդները՝ կրնան
վաղը ըլլալ կարողութիւններ՝ որոնք ի-
րենց արժանի տեղը ունենան գրականու-
թեան մէջ :

Գրականութիւնը, ամէն ժողովուրդի մէջ,
այն դիւթական պարմանին է, որուն սէրէն
չատեր է որ կը գրաւուին, և անոր ցան-
կալի աչքերէն ու յանկուցիչ գեղէն հրապու-
ռողներ՝ անբաժանելի կերպով կը կապուին
անոր, հոգ չէ՛ թէ իրմէ բղխող վայելքը
չառ քիչերու բաշխէ ան :

Ամէն անգամ տաղանդը, յարմարութիւն-
ները ու ձիրքերը չէ՛ որ կը պակսին գաւառի
այդ գրականութեան աշխատակորներուն, ո-
րոնց արտադրութիւններուն շուրջը աւան-
դական նախապաշարում մըն է կազմուած,
և որոնց արտադրութիւնները բարձի թողի
ըլլալու կը սահմանուին սովորաբար :

Յաճախ անոնց գրութեաններուն մէջ կան
նշոյլները խոստմնալից գրողի կարողու-

թեանց, սակայն ի՞նչ որ սովորաբար կը
պակսի իրենց և ի՞նչ որ գլխաւորաբար պատ-
ճառ կ'ըլլայ իրենց միտքի արտադրութիւն-
ներուն խմբագրական զամբիւղը իջեցուելուն,
այդ գրութեաններուն ամբողջութեան մէջ
պակսող վարպետի այն դրոշմը, գրիչ շար-
ժեւու կարողութիւնը յատկանշող այն գի-
տակցութիւնն է, որո՛վ միայն գրութեան մը
կրնայ վեր հանել իր արժանիքը և հրատա-
րակելի դառնալ :

Մինչեւ հիմա ես առիթը ունեցած եմ
գաւառացի գրիչներու արտադրութեանն ար-
ձակ թէ ոտանաւոր մէկ քանի հազար
ձեռագիր կարդալու, որոնց հրատարակու-
թեան յարմար չեղողներուն մէջ նշմարած եմ
որ աչքի զարնող թերութիւնը՝ ընդհանուր
առումով՝ ո՛չ այնչափ նիւթի տկարութիւնն
է և ո՛չ ալ մտածումներու, գաղափարներու
և պատկերներու անյաջողութիւնը, այլ գըլ-
խաւորաբար նիւթը կարենալ վարելու, պէտք
եղած ոճով ու լեզուով զայն կերպարանելու
կարողութեան պակասը՝ որ գրութեանը չա-
րաչար կը ձգէ, կը տկարացնէ, ու կը չեղոքա-
ցնէ անոր ուրիշ բոլոր արժանիքները : Խըմ-
բագիրը չի կրնար, — ժամանակ չունի, —
գրողի մը սիրուն համար, լրացնել այդ թե-
րին, վերակերտելով ամբողջ գրութեանը, —
որով ան կը դատապարտուի զամբիւղին,
որչափ ալ մասնակի արժանիքներ ունենայ :
Ահա՛ գլխաւորաբար ա՛յս է պատճառը որ՝
զամբիւղի ձակատագիրին կը վիճակուին գա-
ւառական գրողներու — անշուշտ նորահաս գը-
րողներու — արտադրութիւնները, պաշազայ
մը, որ գանգաթի յանկերգ մը յարուցած է ի-
րենց կողմէ, արտնջալու խմբագիրներուն
թէ, գաւառացի ըլլալուն համար՝ չեն հրա-
տարակուիր իրենց գրութեանները, թէ գա-
ւառացիին յօդուածը արհամարհելի տարր
(quantité négligeable) մըն է՝ հայ խմբա-
գիրներուն համար :

Միւս կողմէ, այս պայմաններուն մէջ,
անշուշտ հայ խմբագիրը աստիճան մը իրու-
ւունք ունի այնչափ ախորժով ձեռք չառ-
նելու ինչ որ գաւառացի գրողէն կուգայ ի-
ւրեն, — քանի որ փորձով համոզուած է թէ,

չատ անգամ այդ բերքէն հրատարակելու համար վեր վերցուցած ու եւ է մէկ գրուածքը՝ անօգուտ ընթերցում մը եւ զուր ժամավաճառութիւն մը միայն արժած է իրեն, որովհետեւ գրուածքին մէջ գրեթէ միշտ պակաս գտած է այն ոգին, գրիչ բռնող մարդու այն ճարտարութիւնը՝ որ միայն հրատարակելի կը դարձնէ զայն, հոգ չէ թէ գտնուին մասնակի թերութիւններ՝ որոնք կրնան դուրս սրբագրուիլ:

Պէտք է ուրեմն տեսնել թէ, ի՞նչ են ասոնց պատճառները, ճշգրիտ թէ գրականութիւն ընելու մէջ կարենալ յաջողելու համար ի՞նչ է որ կը պակսի գաւառացի գրողին, թէ ի՞նչ բանով է որ ան կրնայ գրող քլլալ:

* *

Անհատի մը միտքը, հասուն կամ տհաս, գրականութեան սէր տալու, գրականութիւն ընելու կը մղեն իր մտաւորական տրամադրութիւնները, անձնական խառնուածքը, և այն պայմանները, միջավայրը և պարագաները՝ որոնցմէ չրջապատուած կը գտնուի:

Արդ, պէտք է ճշգրիտ նախ թէ, մտաւորական ի՞նչ տեսակ տրամադրութիւն մը և վրձակ մըն է որ՝ հայ պատանին կը մղէ գրականութեան սէր տալու, գրականութիւն մշակելու:

Աւելորդ է ըսել թէ, բոլոր անոնք որոնք այս փափաքով կ'արթնան, գաւառական վարժարաններէ դուրս նետուող դեռահաս պատանիներն են՝ որոնք տեղական վարժարաններու ուսումնական մակարդակին աննախանձելի կացութեան հետեւանքով՝ մտաւորական շատ վտիտ պաշար մը միայն կրնան ունենալ՝ երբ ձեռքերին գրիչ կ'առնեն, թարգմանելու համար իրենց ներշնչումները և տղաւորութիւնները: Ո՛չ միայն մտաւոր ընդհանուր զարգացում մը կը պակսի իրենց, այլ և անոնք գո՞նէ մասնակի կերպով, եթէ ոչ ամբողջապէս, չեն ճանչցած այն գրականութիւնը և լեզուն՝ որոնց մշակը ըլլալու տենչանքը կը մոռցանին: Հայ մատենագրութենէն, գրականութենէն ու լեզուէն իրենց տեսած գործերուն ամբողջութիւնը կը կազմէ վարժարաններու մէջ դաս-

սաւանդուած հաւաքածոներու, քանի մը հայերէն դասագիրքերու ընթերցումը, ինչպէս երբեմն ալ, թռուցիկ ուսումնասիրութիւններ՝ վէպերու, քանի մը հանդէսներու հաւաքածոներու և օրաթերթերու վրայ: Ասոնցմէ դուրս շատ քիչ բան կը ճանչնան անոնք, լեզուն ու գրականութիւնը սորվեցնող, զանոնք իրենց լիովին ճանչցող և անոնց հմտացնող: Բնական է որ, այս պայմաններուն մէջ, դիւրին չէ տիրանալ այն բոլոր ձեւերուն, երանգներուն, երեւոյթներուն՝ որոնց ամբողջութիւնովն է կազմուած գրականութիւնը և որոնց կատարեալ հմտացումով միայն՝ կարելի է գրականութիւն ընել, կամ համեստ բացատրութիւնով մը՝ գրիչ շարժել, գրող քլլալ:

Գրականութեան սէրը ունեցող հայ պատանին, գրիչը կ'առնէ ձեռք, — լեզուական կարողութեան ու հմտութեան պէտք ունի, գրելիքը ուղած կերպովը, յղացած եղանակովը արտայայտելու համար: — լեզուն կը պակսի իրեն, որովհետեւ չէ՝ ուսած զայն, չէ՝ ճանչցած՝ իր բոլոր ձևութիւններուն, կարողութիւններուն մէջ: Կը գործածէ միայն այն լեզուն՝ զոր իր քանի մը կցկաուր ընթերցումներէն ուսած և քանի մը իրարու հակառակ հեղինակներէ փոխ առած է: Այդ լեզուն լեզու չըլլար, քանի մը չնմանիր: — Առաջին անյաջողութիւն:

Ոճի մէջ՝ հայ պատանին չունի որոշ դիտակցութիւն մը և ըմբռնում մը: Անգագալար կը գործածէ այն ոճը՝ զոր բրածոյ հեղինակներէ կրցած է ուսնիլ, և այդ ոճը կ'ըլլայ վարժապետական, ճարտասանական, ուսուցիչ, պոռոտ ոճերու բոլոր խառնուրդովը կազմուած անկերպարան բան մը, որ ոչինչ կրնայ ունենալ իր մէջ գեղեցիկ: — Երկրորդ անյաջողութիւն:

Ձեռք կ'առնէ նիւթ մը, որուն ներշնչումը, իր տհաս երեւակայութեանը մէջ, ունեցած է զինքը չրջապատող իրերէն: Իր մտաւորական կարողութիւնը՝ գրական տեսակէտով, չէ՝ այնչափ զարգացած ու նրբացած, որպէսզի կարող ըլլայ դատելու անոր արժանաւորութիւնը կամ անարժանութիւնը:

Հետեւաբար, իրեն համար լաւագոյնը չի կրնար ըլլալ: Սանդաւառուած անով, գիրի կ'առնէ զայն: Բայց վստահաբար շատ չնչին նիւթ մըն է ադ, որուն վրայ որ և է գրական կարողութեան տէր անձ՝ չպիտի ուզէր իսկ մտածել: Կը գրէ, ու արդիւնքը շատ փայլուն բան մը չկրնար ըլլալ:—Երրորդ անյաջողութիւն:

Կը պակսի նաեւ իրեն, գրական ընդհանուր կարողութիւնն ու ճաշակը՝ հագուեցնելու համար իր գրութեանքը գրական վայելուչ հանդերձանքով մը, և պէնելու զայն պատկերներու և դրուագներու պէտք եղած ընդելուզումով:—Զորրորդ անյաջողութիւն:

Եւ ի՛նչ անյաջողութիւն կ'ուզէք տակաւին, որ զայ միանալ՝ կազմելու համար այն ամբողջական անյաջողութիւնը՝ որուն կ'ենթարկուին այս պայմաններուն մէջ գտնուող գաւառական գրողներէ շատերու գրութեանքները, արձակ կամ տաղաչափուած:

Գալով միջավայրի ազդեցութեան, իրողութիւն է նաեւ սա՝ պարագան թէ, այս դասակարգէ գրողներու տեսողութեան հորիզոնը՝ իրենց մտաւորական վիճակին հետեւանքով, ծայրայեղօրէն նեղ ու սահմանափակ ըլլալով, անոնք չեն կրնար լայն ներշնչումներ ու խոր յղացումներ ունենալ, վեր առնելու համար զիրենք չըմպատող իրենց նշանակելի նիւթեր, այլ կը բաւականանան ինչ որ իրենց սահմանափակ տեսողութիւնը կարող կ'ընէ իրենց տեսնելու:

Ինքնին կը հետեւի այս բոլորէն թէ, գաւառացի գրասէր պատանեկութեան՝ գրական խարխափումներու մէջ ունեցած անյաջողութիւնը կը կայանայ՝ մտաւոր բաւարար զարգացումի այն պակասին, գրական ճաշակի, լեզուի ու ոճի հմտութեան ու տիրացման այն վրէպին մէջ՝ որուն ենթականերն են քիչ շատ բոլոր անխոնջ աշխատանքները քերթողական արուեստին և ճարտասանական ճոռումութեանց: Չմոռնանք որ այս խումբէն կարելի չէ անջատել գաւառի բոլոր անկիւնները գտնուող այն տարէցները, —մեծամասնաբար վարժապետներ և այլն, —որոնք պատանութենէ ի վեր յօգուած կը զրկեն խմբ

բագրութիւններու, և անոնց չհրատարակուելուն կը զարմանան, կը զայրանան, և սակայն երբեք չեն ուզեր մտածել ասոր պատճառին:

Ամէն գովեստի ու քաջալերութեան արժանի է իրենց անխոնջ եռանդը եւ փութաշանութիւնը՝ գրականութեան պարտէզը... մշակելու համար: Բայց գրող ըլլալու իրենց բոլոր եռանդին ու հետապնդումներուն մէջ, փոխանակ ցանկալի ասպարէզին դուռնէն հրմշտկուելով ներս մանելու ճիգեր փորձելուն, աւելի խոհական եղած կ'ըլլան անոնք, եթէ հետամտին գտնելու գաղտնիքը՝ այդ դուռնէն արժանաւորապէս մանելու, և այն ատեն սիրալիր հիւրընկալութիւն մը կը սպասէ իրենց:

Այդ գաղտնիքը ուրիշ բան չէ, բայց եթէ տիրանալ՝ գրելու կարողութիւնը ձեռք բերելու բոլոր միջոցներուն, —նախ ճանչնալ լիովին այն գրականութիւնը, լեզուն, ոճը որոնց հմտացումով պիտի մարդուի միտքը, թափանցել անոնց բոլոր երանգներուն ու արուեստագիտական կողմերուն, միտքի հորիզոնը լայնցնել, եւ ամէնէն ետքը, ձիրքն ալ ունենալ՝ գոյ ըլլալու:

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՅԱՅԳՆ Ե ՊԱՅԾԱՌ...



Յայգն է պայծառ անհունօրէն
Յոլցըլանքով իր խօլապար.
Ո՛վ ցանկութեան սին գաղափար
Մի՛ մօտենար հոգւոյս նորէն:

Մի՛ մօտենար հոգւոյս նորէն,
Ո՛վ ցանկութեան սին գաղափար,
Յոլցըլանքով իր խօլապար
Յայգն է պայծառ անհունօրէն:

Մտածումըս կ'անցնի նորէն
Շաւիղներէն իր լուսաւէտ,
Հեշտութիւններ հոգւոյս յաւէտ
Բերելով իր ճամբաներէն:

Գինով եմ ես ծաղկանց բոյրէն,
Տարաշխարհիկ ու գրաւիչ,
Ու ձայներէն ալ որ քիչ քիչ
Իմ երազանքըս կ'օրօրեն:

Եւ անծանօթ աշխարհներուն՝
Անեղբին մէջ խորհրդաղեղ՝
Կ'անդրադառնայ մէջն իմ հոգուն
Կրկնեւրեւոյթը գունագեղ:

Պիտի ըզգամ ես տեւաբար
Գեղն անծանօթ ծաղիկներուն,
Ո՛վ ցանկութեան սին գաղափար
Մի՛ եղծեր սիրտն անոնց թըրթռուն,

Մի՛ եղծեր սիրտն անոնց թըրթռուն,
Ո՛վ ցանկութեան սին գաղափար.
Գեղն անծանօթ ծաղիկներուն
Պիտի ըզգամ ես տեւաբար:

Մ. Կ. ՄԵՍՏՈՒՐԵԱՆ

ՕՏԱՐ ԷՉԵՐ

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԴՐԱՆԱՆՈՒԹԻՒՆ

ՉՕՍԵՐ

Ճիֆրի Չօսըրի հետեւեալ եռանգը (ron-
deau) ինծի կը յիշեցնէ գրեթէ իրեն ժամա-
նակակից մեր սիրերգակներուն բանաստեղ-
ծութիւնները՝ սիրային զգացումի միեւնոյն
կրակովը վառուած:

Չօսըր տիրապետած է իր անունովը կոչ-
ուած ամբողջ գրական շրջանի մը, որ անգ-
լիական գրականութեան երկրորդ շրջանն է.
իր արժանիքը կը կայանայ մասնաւորապէս
իրապաշտ վիպագրի իր տաղանդին մէջ,
որ ծնունդ տուած է «Canterbury Tales»
անունով հէքաթունակ պատմուածքներու
կիսաւարտ շարքի մը, Պօգաչիօի Տասնօր-
եակին նմանող, սակայն ամէն տեսակէտով
անկէ գերազանց:

ՇԱԽԱՍՊ ՄԻԱՄԱՆ

ԵՌԱՆԳ

Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մէկէն,
Իրենց գեղին ա՛լ չեմ կրնար գիմանալ,
Սլաքն անոնց անցաւ սրտիս իմ մէջէն:

Բառերդ լոկ շուտով պիտի դարմանեն
Վերքը սրտիս, մինչ նոր է դեռ անիկա՝
Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մէկէն:

Հաւատարիմ ըզքեզ ես միշտ կը կարծեմ,
Ըլլաս կեանքիս կամ մահուանս տիրուհին.
Գանդի մահէս վերջն ալ սէրդ պիտի սեմ,
Երկու աչքերդ պիտի սպաննեն զիս մէկէն:

ՉՕՍԵՐ

ՅԲԱՆՍՏԱԿԱՆ ԴՐԱՆԱՆՈՒԹԻՒՆ

Ժ Ի Ի Լ Մ Ի Շ Լ Է

Ժիւլ Միշլէ, ֆրանսացի մեծ պատմագիրը
ծնած է Բարիլի մէջ 1798ին: Դժբաղդ պա-
տահարներէ աղքատացած ընտանիքի մը զա-
ւակ՝ տառապած է անընդհատ: Տկար ու հի-
ւանդկալի մանկութիւն մը՝ թշուառութեան
խառնուած՝ թունաւորած են իր երջանկու-
թիւնը, մինչ իրեն պէս շատեր, աւելի բախ-
տաւոր, դուրակեցութեան մը պարգեւած ա-
մէն առաւելութիւնները կը վայելէին նոյն
թարմ հասակին մէջ:

Միշլէ, տարիներ յետոյ իր փառքին մէջ
իսկ՝ երբ կը յիշէր մանկութեան անփառու-
նակ օրերը, որոնք հարկաւ մեծապէս ազդած
էին իր վրայ, կ'ըսէր անհուն վիշտով մը.

—Օ՛հ, մանկութեանս տարիները ամենա-
դառն յիշատակներ կ'արթնցնեն մտքիս մէջ:

Օրերով նոյն իսկ չոր հացի մը կարօտը
քաշող հիւանդկալի այդ մանուկը հաղիւ քիչ
մը տարիքը առած, տարրական դպրոցի մը
շրջանը աւարտած, ստիպուեցաւ իր հօրը աշ-
խատած տպարանին մէջ դործ մը գտնել,
ընտանիքին օգնելու համար: Այս տպարանը,
ինչպէս ինք իր յիշատակներուն մէջ կ'ըսէ,

մութ և խոնաւ էր, փոքրիկ պատուհանէ մը հազիւ տօգոյն լոյս մը ներս կը թափանցէր: Բայց այդ աղաղուն մանուկը իր արտասովոր մտացիութեամբը ամէնուն ուշադրութիւնը կը գրաւէր. բարեկամներու միջնորդութեամբ 1812ին յաջողեցաւ Շառլըմաներ լիսէն մըտնել, սլատուած զգեստներով, անճոռնի կօշիկներով որոնք իր վրայ հրաւիրեցին աչակերտներուն ատելութիւնը և ծիծաղը. իրաւ, իր այնքան աղնիւ հոգին խռովեցաւ, բայց յարատեւ և անխոնջ աշխատութիւնը զինքը սիրելի ըրին ամէնուն և յաջողութեամբ աւարտեց այդ լիսէին շրջանը:

Այս միջոցին զրկուեցաւ մօրմէն որ իր մանկութեան տառապանքներուն մասնակից եղած էր. քիչ մը ժամանակ ալ հօրը հետ աշխատեցաւ, բայց տեսնելով որ առած դաստիարակութիւնը թերի էր, սկսաւ հետեւիլ համալսարանի պատմական և գրական ճիւղերուն և 1818ին Տօքթորի վկայականով դուրս ելաւ անկէ:

Ընտրած էր իր ասպարէզը. պատմական գիտութեանց պիտի հետեւէր, ճիւղ մը որ միշակ միտքերու համար չոր և տաղտկացուցիչ կը համարուի: Միչլէ լիովին փարեցաւ պատմութեան, քննեց նոր, միջին և հին դարերու պատմութիւնները, աւանդութիւնները հաւաքեց, խուզարկեց հնութիւնները:

Միչլէի զգայուն սիրտը, խելքը և վառ երեւակայութիւնը մղեցին զինքը պատմութիւնը հրապուրիչ կերպով ներկայացնելու: Նախ քանի մը միշակ գործեր արտադրեց որոնք ժամանակին ամենալաւ դասական գիրքերը համարուեցան:

1831ին հրատարակեց Հռոմէական Պատմութեան ստուար հատոր մը, ահագին աշխատութեան և քննութեան արդիւնք: Այս գործը պատրաստելէ առաջ իտալիոյ մէջ երկար ուղեւորութիւնով մը ուսումնասիրութիւններ կատարեց: Միչլէ ցոյց տուաւ գրական աշխարհին թէ ինք գիտելու և թափանցելու արտասովոր կարողութիւն մ'ունի:

Բայց զինքը անմահացնող գործը ֆրանսական պատմութիւնը եղաւ, հրաշակերտ մը ճշգրտութեան և ոճի: Այս երկասիրութեան

համար գրելիցէ քառասուն տարի աշխատեցաւ: Անսովոր տաղանդ մը միայն կրնայ այսքան կնճռոտ գործ մը ի գլուխ հանել, կարելի եղածին չափ ճիշդ. քառասուն տարուան աշխատութիւն և քննութիւն իրաւունք կուտան իր հայրենակիցներուն զինքը «աշխատութեան հերոս» մը կոչելու: Միչլէ իրեն ժամանակակից ունեցաւ նշանաւոր պատմագիրներ, բայց անոնց չհետեւեցաւ և զատուղի մը գծեց պատմութեան համար. իր ֆրանսական պատմութեան սկսելէ առաջ՝ նըկարագրեց հին Պրանսան՝ իր զանազան երկիրներով:

Ֆրանսական Պատմութիւնը Միչլէի փառքին պսակումը եղաւ: Իր գրելու եղանակին մէջ բան մը կայ որ մարդուն հոգիին կը խօսի:

Միչլէ անմահացաւ ոչ միայն անոր համար որ մեծ պատմագիր մըն է, այլ միանգամայն ժիւ. դարու ամենամեծ արձակագիրներէն մէկը, պատմագիր ու միանգամայն իմաստասէր: Քննութեան ինչպէս նաև բնութեան սիրահար, կը գիտէ անհուն խանդով մը բնութիւնը, որուն մէկ գեղեցիկ տեսարանը իր ամբողջ էութիւնը զմայլումով կը լեցնէ: Նա հոն կը տեսնէ անձանօթը, անհունին մէջ կը թափանցէ, Ուլկէանին մոռնող ալիքներուն ինչպէս նաև արեւու մէկ շողին մէջ Աստուած կը նշմարէ:

Իր գրուածքները հաճոյքով կը կարդացուին. լեզուն հմայիչ ու մոգող է, պատմական չոր ու կնճռոտ անցքերը այնպիսի ճարտարութեամբ կը նկարէ որ անմիջապէս կը զգաս թէ ինք ո՛չ միայն մեծ պատմագիր մը, ուսումնասիրող մըն է, այլ արուեստագէտ մըն ալ:

Ունի քանի մը ոչ-պատմական երկեր ալ, ինչպէս L'oiseau որուն մէջ բնութեան ճշմարիտ պաշտօնը լիակատար կը տեսնուի: Կեանքին վերջին տարիները ընտանեկան խաղաղ մթնոլորտի մը մէջ գրեց Foyer անուն գործը, որուն մէջ ընտանեկան յարկին սրբութիւնն ու գեղեցկութիւնը կ'երգէ:

Տիկին Միչլէ ալ տաղանդաւոր գրագիր տունի մը ամէն յատկութիւններով օժտուած էր և յօժարակամ իր գործակցութիւնը կը

նուիրէր ամուսնոյն աշխատութեանը, և ան էր որ Միշէի մահէն յետոյ հրատարակեց ամուսնոյն կեանքին դրուագները:

1874ին Ֆրանսա ողբաց Միշէի մահը, որուն հիանալի գերեզմանը կը գտնուի Բարիզ Բէռ Լաշէզի ծաղկաւէտ գերեզմանատան մէջ:

Տ. Կ. Չ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂՈՒՄԻՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Քէօքսի բուրգին շուրջը (Եգիպտոս) Լայրցիկցի Բրոֆ. Տոքթ. Շէպանտօրֆ հնախոյզին ձեռամբ կատարուած պեղումները բաւական կարեւոր արդիւնքներ ունեցան: Բրոֆսէօրը Դահիրէէ գրուած մայիս 15 թուակիր նամակով մը կը պատմէ. — «Երկու քուկէս ամիս է որ 400 գործաւորներու հետ պեղումներ կ'ընենք Քէօքսի բուրգին շուրջը և դաշտային նեղ երկաթուղւոյ մը միջոցաւ բաւական տեղ աշխատեցանք: Բարէ կամ աղիւսէ չինուած յիսունի չափ դամբաններ գտանք, և զանոնք այնպէս մը մաքրեցինք որ կատարեալ գաղափար մը կարելի է կազմել անոնց վրայ: Մարդ ուղածին պէս կրնայ չըմագայիլ այս փոքրիկ գերեզմանատան փողոցներուն մէջ և մանկէ այն աղօթատեղին ուր ատենօք զոհեր կը մատուցուէին մեռելոց: Մեծ աշխատութեան պատճառ եղան մեզ այն նեղ ու քառակուսի անցքերը որոնք բացուած էին անապատին ժայռերուն մէջ, և որոնց խորութիւնը մերթ 10 — 15 մետրի կը հասնէր: Ատոնցմէ մեծ մասին տակ փոքր սենեակներ կան ուր դրուած էին մեռելները: Դժբախտաբար այդ անցքերը պարպելու համար կրած դժուարին աշխատանքնիս չէր համապատասխաներ պարունակութեանը հետ: Անոնց մեծ մասին մէջ կը գտնուէին մարդկային կմախքներ, և այդ ալ յաճախ այնպիսի դէշ և աւրուած վիճակի մէջ, որ մարդաբաններուն իսկ մեծ ուրախութիւն պիտի չպատճառէին: Գտանք նաեւ այնպիսիներ որ քարէ կամ

փայտէ դադաղի մը մէջ դրուած էին, և իրենց քով կային երկու սափորներ կամ ամաններ: Մոմիաները, այսինքն խնամով զմուտուած և պաստաւով ու լաթէ կապերով պատաւորուած դիակները, աւելի ետքի դամբաններուն մէջ գտնուեցան: Մեր գտած այս գերեզմաններէն մեծ մասին թուականներուն ատեն (30)0 տարի առաջ Ն. Ք.) մեռելներն այնչափ խնամքով թաղելու սովորութիւնն ընդունուած չէր: Եւ այս պեղումները կատարելով գլխաւոր փափաք էր եգիպտական արուեստներուն վրայ գիւտեր ընել. յոյսերս չափէն աւելի պսակուեցան: Երեսունի չափ եգիպտացի արանց և կանանց քարէ արձաններ ժողովեցինք, որոնք իրենց հնութեան նայելով, բաւական լաւ պահուած են. ասոնց մէջ կան բարձր աստիճանաւորներ և պաշտօնեաներ խորխտ դիրքերով: Շատ հետաքրքրական է տեսնել ժողովուրդին ստորին դասակարգէ անձերը, ծառաներն ու աղախիները, որոնք իրենց տէրերուն հետ գերեզման տարուած են հոն ծառայելու համար անոնց պէտքերուն: Ունինք ջաղացպանուհիներ— և ասոնց մէջ մէկը իրօք դեղեցիկ է— որոնք ինչպէս ցայսօր կ'ընեն Եգիպտացի կիները, քարով կը փըշրեն ցորենը. մարդ մը՝ որ մեծ ամանի մը մէջ միս կ'եփէ, գեղեցիկ կին մը որ կաթ կը կթէ, հացադորդներ, սպանդադոր՝ եւն: Վերջապէս գեղեցիկ ու իրապէս սիրուն զէմքեր ունինք մեր առջեւ, բայց բնականաբար ասոնց ամենքն ալ Լայրցիկ պիտի չկրնանք փոխադրել. ըստ դաշնագրին, եգիպտական կառավարութիւնն իրեն համար վար պիտի դնէ ասոնց մէկ մասը: Բայց կը յուսամ որ յաջողիմ բուրգերու ժամանակէն մնացած քարէ Եգիպտացիները հետ բերել: Պեղման աշխատութիւննիս աւարտած է գրեթէ. մաքրութեան գործերով կը զբաղինք և այդ ալ քիչ օրէն կը լիննայ: Գործին կարեւորագոյն և դժուարին մասը կառավարութեան հետ ընկելը բաժանումս և ինձ ինկած բաժինն ալ ծրարելս է »:

ՏՊԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՐԱԿՄՈՒՏԻԸ

Դիտէ՞ք աւելի տխուր բան մը՝ քան կիրակմուտքը որ կը կատարուի ընտանեկան երգիքին տակ, մահուան մը յաջորդող շաբաթ իրիկունը։ Յուդարկաւորութիւն, թաղում, հակառակ իրենց դառնութեանը՝ տեսակ մը արարողական հանգամանք ունին, որ մեռելին տիրոջ միտքը պահ մը կը հեռացնէ դագաղէն, շուրջիններուն մտածելու, ցաւակցութիւններ ընդունելու համար. այդ միջոցին, տենդադին բան մը կայ իր սուգին մէջ որ կը ճնշուի, կը խղիւղի կարծես, արտաքին երեւոյթներու, ձեւակերպութեանց առջեւ տեղի տալու համար։

Կիրակմուտքը զո՛ւրկ է այս բոլոր մեղմացուցիչ պարագաներէն ու մեռեալին յիշատակը իր սարսաղադեցիկ մերկութեանը մէջ կը ցցէ, կը կենդանացնէ։ Տունը մաքրուած, կոկոսած է առտունէ. սեւ վարագոյրներուն, սեւ ծածկոյթներուն փոխին առնուած է, եւ տանը կիներն ու աղջիկները՝ իրենք ալ սեւեր հագած ու գլուխին պարզօրէն շիտկած, սուգի յատուկ տեսակ մը պըշրողութիւն ունեցած են անդալաբար. քիչ կը խօսին այդ օրը ու ժամացոյցը՝ չ'առաջանար կարծես՝ իրիկունը հաճնելու համար։

Ի՞նչ պիտի պատահի իրիկունը։ Օրհնութիւն մը պիտի նուիրուի իրենց դեռնոր անհետացող սիրելիին յիշատակին, — հայր մը, մայր մը, եղբայր մը կամ ամուսին մը, որ դեռ եօթնեակ մը առաջ իր տեղը ունէր հո՛ն, իրենց մէջ։ Եւ այս աղօթքի ու օրհնութեան սպասումը կը ճմլէ սիրտերնին նոյն քան սաստկութեամբ՝ որքան զգածուած էին, դագաղը դուրս հանուած վայրկեանին։

Մթնշաղին, տաներէցը կուգայ, միակ հիւրը որուն կըսպասեն այդ իրիկունը. քաւուածքը ծանր է ու դէմքը տխուր. իր ներկայութիւնը ցնցում մը առաջ կը բերէ, վասն զի կիրակմուտքը տօնելու եկած է։ Տնեցիները խօսք չեն գտներ ըսելու եւ քահանան

ինքն ալ իր սովորական խօսուածքիւնը կորսնցուցած է։ Ամէնուն աչքերը բնազդաբար կը յառին դէպի սենեակին այն անկիւնը որ մեռնողինն էր եւ որ պարապ կը մնայ հիմակ. ոչ ոք կը համարձակի նստիլ այն տեղը որ գերեզմանափոսի մը տպաւորութիւնը կը թողու։

Վերջապէս քահանան լուութիւնը կը խզէ ու քանի մը մխիթարական բառեր քրթմիջելէ ետք՝ խուկ բերել կուտայ, զոր կ'օրհնէ, կը ծիւէ ու հոգեհանգիստ մը կը մըմնչէ։

Օ՛հ, կիրակմուտքի խուկին այդ ծուխը. մեռել կը բուրէ կարծես։ Ո՛չ մէկ բոյր, ո՛չ մէկ ծուխ, ո՛չ մէկ զօրաւոր դեղ կամ հոտեղէն անոր չափ կը ցնցէ մարդս մինչեւ իր հոգիին խորը, մարմինն ու երակներուն ամէն մէկ խորշերուն թափանցելով ու գլխու պտոյտ մը, գինովութիւն մը պատճառելով, որոնք արցունք կը բերեն աչքերէն։

Յետոյ, «հոգու հացը» կամ սեղանը, որուն շուրջը կը բոլորուին քահանային հետ, եւ ինչ ալ ըլլայ ընտանիքին նիւթական վիճակը, բարեկեցիկ կամ աղքատիկ, աւանդական հրուշակը պէտք է կազմէ վերջին պնակը։ Ընթրիքն ալ լուութեամբ կ'անցնի գրեթէ ու կ'աւարտի «Հոգեոց»ով։ Ի՛նչ վերջը քահանան կը մեկնի ու տնեցիները կ'առանձնանան իրենց ննջասենեակները՝ անցունելու գիշեր մը որ լուսնալիք չունի կարծես։

Յաջորդ առտուն, կիրակի, աւելի թեթեւ ու քիչ մը մխիթարուած կըզգան ինքզինքներին։ Թէեւ ո՛չ զուարթ ու միշտ սգաւոր, նոր կեանք մը սկսած է ամբողջ ընտանիքին համար։ Կիրակմուտքին կատարումը կազդուրած է զիրենք ու բարեպաշտիկ աւանդութեամբ մը կերեւակայեն թէ իրենց սիրելին հիմակ աւելի թեթեւ քունով մը կը ննջէ գերեզմանատան անկիւնը։

ԱՌԱՋԻՆ ՍՊԻՏԱԿ ԹԵԼԸ

Հայելիէն մէջ կը նայիմ մեքենական սովորութեամբ մը, բայց այս անգամ չեմ հեռանար անկէ. ընդհակառակը աւելի՛ կը մօտենամ ու կ'անշարժանամ. շատ աննշան բան

մըն է սակայն զարկածը, աննշմարելի բան մը աչքիս... սպիտակ թել մը որ եկեր խառնուեր է սև պեխերուս: Միակ նուրբ թել մը, ո՛չ բոլորովին ճերմակ, բաց մոխրագոյն, որ տպաւորութիւն մը կը թողու վրաս ու մըտածկոտ կը դարձնէ զիս:

Խնչ կարեւորութիւն ունի անիկա, — կը խորհիմ ու կ'ուզեմ ուշադրութիւնս վրիպեցնել անոր վրայէն. խուցիս շրջանը կ'ընեմ, լուսանկար մը կը դիտեմ, գիրք մը կը թըղթատեմ, սեղանիս առջին կ'անցնիմ աշխատելու: Աչքիս ու թուղթին միջև կ'ուրուաւ գծուի նորէն սպիտակ թելը, հեգնութեան մը պէս՝ զգացնելու համար ինծի թէ երիտասարդութիւնս հրաժեշտ տալու՝ կը պատրաստուի, թէև ծերութիւնը դեռ շատ հեռու ըլլայ: Եւ առանց ուղեկու, գրպանիս պզտիկ հայելին կը նայիմ այս անգամ, համոզուելու համար թէ իրօք սպիտակ մը խառնուած է սև թելերուն, թէ ոչ պատրանք մըն է զոր կը կրեմ:

Տարակոյսի տեղի չի միտք ալեւս, սպիտակ թելը հո՛ն իր տեղն է, անողոք կերպով ցցուած շուրջիններն ալ վարակելու սպառնալիքով:

Հասուն տարիքին այդ ազդարարը ակտանիլի մը դառնութիւնը կը գերազանցէ. հիւսնագութիւն մը կրնայ դարմանուիլ, բժշկէ կը կրնայ սխալած ըլլալ: Սպիտակ թելը սխալիլ չգիտեր իր ըսել ուզածին մէջ ու ծերութեան ճամբան ա'լ ետ չի դարձներ մարդը: Պէտք է երթալ այլեւս, օր մըն ալ ամբողջ մազերդ ճերմկցած տեսնելու նախազգացումով, եթէ ապրիս: Բայց այն ատեն, գէթ անդորրաւէտ կեանքի մը հաճոյքը պիտի զգայի, տարիներով բեռնաւորուած ըլլալու գոհունակութիւնը: Յառաջացած տարիքդ պիտի ներդաշնակ գար ճերմկցած մազերուդ, մինչդեռ հիմա՝ դեռ երիտասարդութեան սեմին վրայ՝ սլաքի հարուած մըն է քեզի այդ սպիտակ թելը, ցաւազին խայթուածք մը զոր ուրիշները չեն նշմարեր, չեն տեսներ: Ու դուն քեզի, լուռ հրաժեշտ մը կուտաս երիտասարդութեանդ, ինչ որ ալ ըլլան զայն պահպանել ուղեկու արտաքին ճիգերդ, կը թօթափես օսկի երազներդ. ու կը թաղուիս տխուր խոհեմով մէջ:

Այդ սպիտակ թելը, թէև մարմնիդ չի վնասեր ու դէմքդ չի փոխեր, բայց սիրտդ կ'աւերէ, ու տեսակ մը նողկանքով երեսդ կը դարձնես հայելիէն, ա'լ նայիլ չես ուղեր, ու կը զղջաս ուշադրութիւն ըրած ըլլալուդ համար:

Ֆ.—

ՏԻԿԻՆ ԶՍՊԷԼ ԵՍՍՅԵԱՆԷ ստացանք, վերջին պահուն, գրական գեղեցիկ ու շահեկան յօդուած մը զոր պիտի հրատարակենք Մասիսի յաջորդ թիւով:

ԽՐԱՌԱՐԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

Ուսումն. Խորհուրդի ատենապետ Տօքթ. Տիգրան պէյ Աճէմեան կը շարունակէ իր քննական պտոյտները Կ. Պոլսոյ թաղային վարժարաններուն մէջ: Շարթուս, յաջորդաբար այցելեց Պալատի Խորէնեան երկսեռ վարժարանը ուսկից գոհ տպաւորութեամբ մը մեկնեցաւ, և Սալմաթօմրուքի վարժարանը զոր, ընդհակառակը, շատ խեղճ ու լքեալ վիճակի մէջ գտաւ:

* * Ասկէ առաջ, Ուսումն. Խորհուրդը առաջարկած էր՝ Կ. Պոլսոյ թաղային վարժարաններուն կրթական պաշտօնեաները պարտաւորել որ իրենց ստացած թոշակներուն համեմատութեամբ թեթեւ վճարում մը ընեն Ուսուցչաց օգնութեան Մատուկին, որուն Հոգաբարձութիւնն ալ համակարծիք գտնուած էր այս առաջարկին: Բաղ. Ժողովը, իր վերջին նիստին մէջ, հաստատեց այս կարգադրութիւնը, պայմանով որ իւրաքանչիւր դպրոցի ընելիք վճարմանց համաչափ գումար մըն ալ եկեղեցիներու Մատուկները պարտաւոր ըլլան տալու:

Յուճաց Ս. Պատրիարքին եղբօրը մահուան ամթիւ, Ս. Պատրիարք Հօր կողմէ Տ. Մեսարոպ արքեպիսկ. ցաւակցական այցելութեան գնաց Ֆէնէրի Պատրիարքարանը և Տ. Հմայեակ եպիսկ. ներկայ գտնուեցաւ յուղարկաւորութեան, Պոյաճըզիւղի Յունաց եկեղեցին:

Եգիպտոսի Դաւառ. Ժողովը՝ Պատրիարքարանի յանձնարարութեամբ փութացնելով առաջնորդական ընտրութիւնը, նախընթաց երկուշաբթի յատկապէս գումարուեր է անոր կատարմանը համար և մեծամասնութեան քուէով ընտրեր է Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղանունին, Քէօթահայի առաջն. տեղապահը որուն անունը կը գտնուէր արդէն՝ Պատրիարքարանի կողմէ զրկուած ընտրելիներու եռանուն ցանկին մէջ։ Դաւառ. Ժողովին ատենապետը, Պօղոս փաշա Նուպար, թէև անձնական տկարութեան պատճառով չէ կրցեր ներկայ գտնուիլ, բայց նամակով մը իր քուէն տուեր է Աղանունի վարդապետին՝ աւելցնելով թէ նպատաւոր տեղեկութիւն ստացած է անոր մասին։

Եգիպտոսի նորընտիր առաջնորդը երկուստարդ եկեղեցական մըն է, բայց լուրջ և ծանրախոհ՝ ինչպէս կը վկայեն զինքը ճանչցողները։ Իր կրօնային հմտութեան հետ՝ գրական կարողութիւն ալ ունի և աշխատակցած է մեր թերթերէ մօտնց։ Աշակերտն է Դուրեան Սրբազանի՝ Պարտիզակի քարոզչութեան և տեսչութեան չրջանէն, և բաւական տարիներէ ի վեր գոհացուցիչ կերպով կը վարէ Քէօթահայի առաջն. տեղապահութեան համեստ պաշտօնը։

Նշանախօսութիւն. — Անցեալ կիրակի, ընտանեկան վայելուչ հանդէսով մը տեղի ունեցաւ Արամ Ատիլ պէյի նշանախօսութիւնը Օր. Արշալոյս Փափաղեանի հետ, դուստր սեղանաւոր Երեւում էֆ. Փափաղեանի, այս վերջնոյն ընակարանին մէջ, Արնավուտքէօյ։ Պետական բարձրաստիճան պաշտօնատարներ և երկու կողմի ազգականներու և բարեկամներու ընտրեալ բաղմութիւն մը ներկայ էր այս հանդէսին, ուր ընդունելութիւնք սկսան կայս. Համիտիէ քայլերգին նուագումով և ջերմագին բարեմաղթութիւններով Վեհ. Կայսեր արեւադարձեան համար։ Արամ Ատիլ պէյ, թարգման կայս. Պալատան, իր գնահատելի կարողութեամբը կարեւոր տեղ մը կը գրաւէ օսմ. պաշտօնատարներու շարքին մէջ և Օր. Արշալոյս Փափաղեան խնամեալ դաստիարակութիւն մը կը միացնէ իր բնածին շնորհալիութեան ու ձիրքերուն։

Այս բարեգէպ նշանախօսութեան առթիւ օրաթերթերուն կողմէ արտայայտուած խնդակցութեանց կը միացնենք մեր ալ շնորհաւորութիւնները։

Գեղարուես. — Բարիզէ կը հաղորդեն Արեւելի, թէ Կ. Պոլսեցի Պ. Արամ Պապական, նկարչութեան ուսանող, գծագրութեան ճիւղին մէջ Ա. կարգի մրցանակ ստացեր է Գեղարուեստից վարժարանի քննութեան մէջ ուր ներկայացած էին 550է աւելի ընտրելիներ և միայն 45ը ընդունուած։ Գարձեալ, նոյն թերթին հաղորդուած տեղեկութեան մը նայելով, այս տարի երեք արուեստագէտ հայ երիտասարդներ արժանացեր են Սալօն օհ զ'Առթիսդ Ֆրանսէն ընդունուելու ուր ցուցադրուեր են անոնց նկարները։— Տաղանդաւոր թաւջութակահար Տիրան պէյ Ալէքսանեան, որ Ֆրանսական ոստանին երաժշտական չրջանակներուն մէջ համակիր ընդունելութիւն մը գտած է, անցեալ երկուշաբթի Պուքրէշ հասեր է նուագահանդէս մը տալու համար հոն, ուսկից Բարիզ պիտի վերադառնայ՝ Լամուրէօի Քօնսէններուն մասնակցելու համար։

ԹՈՒԲԱՆՏԻ ՎՐԱՅ

ԿԵՆՍԱԿԱՆ ԾԱՆՅԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրեց ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ժողովուրդին հասկնալի լեզուով մը բացատրուած է այնքան տարածուած և վտանգաւոր այս հիւանդութեան ընթերցելը։ Յրատակօրէն ցուցուած են վարակումէ զերծ մնալու պարզ կերպերն ու դարմանումի ամենէն բանաւոր եղանակները։ Ամէն մարդու և ամէն տան անհրաժեշտ պէտքը։

Դինը՝ միայն 60 փարա։


Իժմել Պալենց Դրատուն, Կ. Պոլիս, կամ չեղիւակին՝ Պարտիզակ։

Հիմնադիր—Կ. Ս. ԻԹԻԻԺԵԱՆ

Տէր ԷՆ ՏՃՈՐԿԵ—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1875ԻՆ

Կը գործէ ուղղակի ճրանա. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ
Ընթացիկ ապահովք. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Դրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՄ Ս. ԳԱԼՖԱՅԱՆ

Պոլիս, Հաճօքույօ խան Խօ. 53

Գաւառները պատուաւք գործակալներ կը
մշտուին: 10—50



ՅՈՎԱԿԻՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զրահեան արաքսման

Պալպալեան ամէն օր ակոսայի ամէն տե-
օակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունին. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Յինգ-
չարթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րայխաւօրէ իր լիցուցած ու չինած ակոս-
ները: Յորեկները ակոսայ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուեղին
եամքէն կտխեալ է: Վկայեալ տառամաքու-
թեան Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն
դարմանաւան մէջ: Աղփայեցեալն ձրի 1—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՇ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կարծա-Սէրայի Լիսին դէմ

Դե. Եե. Շք. օրերը առաւօտեան կանու-


խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ 9—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

ԿԸ ՊՈՐՄԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԴԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ տոկ հրդեհի դէմ Ապահա-
վագրեալն Ընկերութիւնն մըն է, ճանաչ
իւր պատուաւքութեամբ եւ միատուց մէջ
իւր տնտիսական վճարումներով:

ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ ամէն տեսակ տնտիսութեւ
չարժեւն ստացուածք, յոյժ նպատակաւ
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎԼԱՍՈՒՅ. Յա՛մդ վճա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
ոսկի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառ-
աց. Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերայիս խան, Պանֆ Օրօմանի փոյ
Ղալաքիս:

Փօխ դործակալք ի Պոլիս

ՌՈՒԲ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԼԻԲԵԱՆ

Էմին պէյ խան Գնացիեան խան

Զանիլ բիւզըրու

10—10

Ա. ԷՆԲՍԵԼԻՃԵԱՆ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Բ Գ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գիւնեով: Նպաստաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ՁերԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրթիւններէն, որոնց կենթադրուին միշտ տն աճիւնք, ու ռաւաքախիւններու բաւական (accumulation d'es bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապա- հովագրուին:

Ընկերութեան դրամասուցն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրնը Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Խալէթ Սան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

1—10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՑՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒՐՍ ԱՌԻՍ ԵՎ ՊԱՎԻԵՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային աւերակներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւորն է Ի Կ. Պոլիս, Քուէքի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրսնիակ, Պոլիս, Ալեքսան Խան;

1—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎՃԱԱՌԱՏՈՒՆ

ՀԵՐՃԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհաբեղեցնելու, ամեն տեսակ կան կարասիներու եւ ամենեւնեւ նորաձեւ հագուստներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատահաբար հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճոխացնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում ապրու հաւանական, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զոտ. կրնե՞րու եւ այրերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ԶԳԵՇՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամբներ, աֆրոններ եւ ալլն.) ճոխ մթերանոց մը հաւատարմեան հնք. խիստ դիւրամատչելի գիներով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հոճին դիմել վերայիշեալ վաճառատները, ուրկէ առաքակոյս առհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 դեղչ:

3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմիայն աղամանդեալ, գոհարեղէնները երբ գործածուած բայց ա՛յլուս մնացած ըլլան՝ հարիւրին 10 դեղչով եւ կտոնուին: Իսկ ապառիկ ծախում եւ ա՛յլուս մնացած միմիայն աղամանդեալ, գոհարեղէններն ալ հարիւրին 15 դեղչով եւ կտոնուին:

1—10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաճական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջող պատրաստ են:

ՄԵՇ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՒՅ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ. ԿԵԱՆՔ, ՓՈՒԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ



1881 մարտ 20ի Կայս. Ուլազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈՒԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵԱՒՈՎ ՈՒՂԵՒՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՏ, րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամագլուխ եւ մնացուց հատուցում


314,768,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղարեան խան, Վոյվոսա, Ղալաթիա,

1—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենիւնայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ անդադրուկի աղբիւր մըն է։ Բոլոր աշխարհի գիտէ թէ՛

Մ Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՐ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ստի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՍԻՆԿԷՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

Կ.Ս.Ա.Թ.Ս.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան. Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղլի, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԻՐՍԱՐ

Չարը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք անի.

Կասաբեալ երաւեսաւորութիւնը։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը։

3-10

ԿԱՐԱՊԵՏ ԷՆ. ԻԻԻԻԻԻԻԻԻԻ Թարգ. մանած գիրքերէն հետեւեալները կը գրուին Տէր-Մինասեան գրատունը եւ մայրաքաղաքի միւս հայ գրադատներուն քով.

հասնր	դրո.
Կարմիր մօրդօց երդււմը	2
Ընտանեկան	2
Փարիզի ամուսնութիւնները	1
Թափառական Հրեայ	4
Արուարձանին տղան	3
Հանրակրթութիւն ոճիւրը	1

Սկզբունք Բաղ. Տնտեսութեան 1 4
Ընտանեկան գաղափարներ 3 15
7-10

ՀԱՄԱՌՕՏ ՕՍՄ. ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

Ի սիսա Ազգ. նախադրական վարժարանաց գրեց ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ
Կեդրոնաւորին է Կ. Պօլիս. Չաքմաքճըլար
Ձիւմպիւլլիւ խան, Փափուկան Միհրան
էֆի Կաղմատունը. Գրեւ 100 փԱՐԱ 8-10